

Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում նշվեց Թարգմանիչ վարդապետների տոնը:

Օրվա հանդիսությունները Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կազմակերպվել էին Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի, Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի և ՀՀ Գրողների միության ջանքերով:

Տոնակատարությունն սկսվեց եկեղեցուն կից Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան դպրատանը՝ «Մաշտոցյան ընթերցումներ» խորագիրը կրող գիտաժողովով, որին մասնակցում էին Հայաստանի և տարբեր երկրների գրողներ ու գրականագետներ, Գրողների միության ու ՀՀ ԳԱԱ անդամներ:

Այնուհետև եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: Ողջ Պատարագի ընթացքում չէր դադարում ուխտավորների հոսքը Ս. Մաշտոցի շիրմին:

Պատարագի ընթացքում իր օրհնության խոսքն ուխտավորներին հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը. «Մենք եկել ենք հաղորդակցվելու Մաշտոցյան խորհրդին, մեր հոգում, սրտում ու մտքում մեկ անգամ ևս հնչեցնելու աստվածապարգև այն ճշմարտությունները, որ հնչեցին Թարգմանչաց վարդապետների շուրթերից...

Դպրությամբ է, որ մենք կարողացել ենք հաղթահարել պատմության մեջ մեզ բաժին ընկած ամեն տեսակ փորձությունները, որովհետև բռնի ուժից ավելի զորեղ էր գիտության զորությունը, դպրության ուժը, որ մեր ժողովրդի կյանքում մարմնավորվել է որպես աղոթք, որպես մշակույթ և արվեստի գլուխգործոցներ, որոնցով այսօր մենք հպարտությամբ ներկայանում ենք աշխարհին ու մարդկությանը»:

Ի գնահատումն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի բազմամյա ծառայության՝ Վեհափառ Հայրապետը Հայր Սուրբին շնորհեց ականակուռ լանջախաչ և ծանուցելով Հայր Սուրբի նոր նշանակման մասին՝ իբրև Վիրահայոց թեմի առաջնորդ, հաջողություն և բարի ընթացք մաղթեց նրան:

Եկեղեցու բակում կազմակերպված ցերեկույթը երախտագիտության ու ողջույնի խոսքով բացեցին Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը և Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը: Շնորհավորանքի խոսք ասաց նաև Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը: Արարողությանն ազգագրական երգերի իրենց կատարումներով մասնակցեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայորդյաց տների սաները:

Այնուհետև տեղի ունեցավ պատանի ասմունքողների հանրապետական մրցանակաբաշխությունը, որի ընթացքում մրցանակներ տրվեցին Հայաստանում, Արցախում և Ջավախքում վերջերս անցկացված ասմունքի մրցույթի հաղթողներին:

Մաշտոցի անվան դպրատանն անցկացվեց օրվա խորհրդին համահունչ ևս մեկ միջոցառում: ՀՀ Գրողների միության կազմակերպած հանդիսության ընթացքում շնորհվեցին գրական-թարգմանական աշխատանքները գնահատող ու խրախուսող տարբեր մրցանակներ:

«Մաշտոցյան ընթերցումներ» գիտաժողովի ավարտին համերգային ծրագրով հանդես եկավ Գյումրիի «Գոհար» երգչախումբը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ